

**ՆՈՐ ՆԻԻԹԵՐ**  
**ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԱՐԲԱՀԱՄ ԱՐԾԻԻԵԱՆ**  
**ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԳԻ ՄԱՍԻՆ**  
 (ՔԱՂՈՒԱԾ Ս. ՂԱԶԱՐԻ ԴԻԻԱՆԵՆ)

Տասնեութ տարեկան էր Արծիւեան, երբ՝ 1697ին՝ կը հանդիպէր Սեբաստացի երիտասարդ արեղայի մը, որ կ'ուղղուէր դէպի Պոլիս, Միաբանութիւն մը հիմնելու հսկայ զաղափարով խանդավառ: Մխիթար Աբբա հայրն էր այդ երիտասարդ նորընծայ արեղան, որուն շատ կը մտերմանայ Արծիւեան ու երկար կը խօսակցին դաւանական հարցերու մասին, որոնք այն օրերուն կ'արծարծէին հայ Եկեղեցւոյ ծոցին մէջ: Տարիներ վերջ, 1720ին, Կղեմէս ԺԱ. Քահանայապետին ուղղուած նամակի մը մէջ, Արծիւեան պիտի անդրադառնայ այս երջանիկ հանդիպումին, յայտարարելու համար թէ «սկսայ ճանաչել զուղղափառ ճշմարտութիւնն ի ձեռն արդոյ Մխիթար Աբբահօր, որ բնակի այժմ ի Վենետիկ»<sup>1</sup>:

Յաջորդաբար, երբ Մխիթար դեռ նոր հաստատուած էր Ս. Ղազարի մէջ ու նուիրուած շինարար աշխատանքի, դէպի Արեւելք քարոզութեան կը զրկէ իր աշակերտներէն ոմանք, որոնցմէ է Հ. Թոմաս, որ կ'ուղղուէր դէպի Հալէպի սահմանները, որոնք Արծիւեան Եպիսկոպոսի իրաւասութեան տակ էին: Հ. Թոմաս իսկոյն կը դիմէ Արծիւեանի՝ քարոզութեան իրաւասութիւն խնդրելով, եւ կ'ընդունի դրական պատասխան, գրուած «Թիլին Գրիստոսի ՌԶԳԻ (1723), Մայիսի ԺԵ (15), ի լեռն Քէսըրվան», առաջնորդական կնիքով հաստատուած: Նամակը օժոռն է բարեպաշտ հովիւի մը ջերմ հոգիով, որ կը յայտնէ իր մեծ ուրախութիւնը, ի լուր նոր քարոզչի մը ժամանումին, «առաքեցեալ Երջանկապատիւ յեղբօրէն մերմէ՝ Մխիթար Աբբայէն»: ու կ'աւելցնէ՝ թէ «որչափ իմ ձեռս է եւ կարող եմ՝ տամ

1. Ինքնակենսագրութիւն Աբրահամ-Պետրոս Ա. Արծիւեանի. Դիւան Անտոնեան Միաբանութեան, 2-րդ առ, տուի 4, թիւ 1:

հրաման եւ զօրութիւն շնորհեմ, յունիս զոր խնդրեցեր», այսինքն՝ քարոզելու իշխանութիւն, Հալէպի թեմին մէջ:

Բուն առաջին նամակը՝ որ Արծիւեան գրած է Մխիթար Աբբահօր, կը կրէ 18 Յունիս 1741 թուականը, եւ որ շատ հետաքրքրական է իր պարունակութեամբ: Կը գրէ 62 տարեկան հասակին, տեղեկացնելով նախ իր կեանքի զանազան հանգրուաններու մասին. «պարծիւ միայն ի նախատինս, մերթ ի հալածանս եւ մերթ ի տեղիս տեղիս յաքսորանս՝ թաղաւորական հրամանաւ. Աստուծով եղեւ ինձ աղատութիւն եւ առաւել համարձակութիւն՝ վասն ճշմարտութեան յայտնի ի մէջ Եկեղեցւոյ Հայոց»: Կը պատմէ ապա թէ ինչպէս Յովհաննէս Պատրիարք Կոլոտ՝ թաղաւորական հրովարտելով ուղած է զինքը արքայապետ Երուսաղէմ, հոն ապա շխարհելու համար մինչեւ մահը: Ասիկա իր դէմ հրատարակուած հինգերորդ հրովարտակն էր: Եւրոպացիներ Երապոլիսի (Թրիպոլի) մէջ ոտքի կ'ելլեն, հակառակելով Փաշային եւ եօթը զինուորներուն, որոնք եկած էին զինք ձերբակալելու: Արծիւեան 3000 մարջիլ պարտք ունէր անոնց, եւ երբ Փաշան կը տոխլէ հատուցանել պարտքը, Եպիսկոպոսը կը պատասխանէ. «Էֆէնտիմ, ես աղքատ եւ տէրվիշ ոմն եմ, պիտի որ մուրամ եւ սլճարեմ»: Կը յաջողի փախչիլ՝ իր աշակերտներով՝ Լիբանան, Քէսըրվանի լեռը, ուր կը գտնէ նպաստաւոր պայմաններ: Նոյն ընթացքին վրայ, մարոնիները ունէին 24 վանքեր, յոյները՝ ինը վանքեր, լատին վեղարաւորները՝ երեք, Յիսուսեաններն ու Փրանկիսկեանները՝ մէկական: Նոյն չրջանակին մէջ է որ Արծիւեան կը հիմնէ հայ վանք մը, «յանուն Յիսուսի փրկչին մերոյ եւ եօթն վիրաց Մարիամու սրբուհւոյ կուսին եւ Յօսէփայ Աստուածահօրն»: Հիմնարկութիւնը կը կառարուի շուրջ 1720ական թուականներուն, որդեգրելով Ս. Անտոնի կանոնները՝ ինչ ինչ փոփոխութիւններով, ընդունելով կրօնաւորական երեք ուխտերը<sup>2</sup>: Քսան տարուան ընթացքին՝ միաբաններու թիւը կ'ըլլայ 16, որոնցմէ երեքը՝ եպիսկոպոս. կ'ունենայ նաեւ քսանի չափ նորընծաներ:

2. Անտոնեան Միաբանութեան անդամներէն՝ Նիկողոս Վրդ. Գրիգորեան, 25 Յունիս 1740ին, Աղեքսանդրիայէն գրած նամակի մը մէջ, ուղղուած Հ. Պօղոս Տայի Սիմոնեանի (Վենետիկ), ի միջի այլոց, կու տայ մեզի թէ Ս. Փրկչի մէջ կրօնաւորները ինչ բանաձեւով կը կատարէին իրենց ուխտադրութիւնը. «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն: Լո՛ւր ինձ, Հայր սուրբ (Ա. Ա.). առաջի Գերապայծառ Տէրութեանդ եւ առաջի Վերապատուելի Հարցդ եւ Եղբարց ներկայից, յանձնեմ եւ նուիրեմ զիս Աստուծոյ. նախ՝ ուխտեմ զողջախոհութիւն առ ամենայն զգայարան իմ, ներքոյ եւ արտաքոյ. երկրորդ՝ ուխտեմ զհնազանդութիւն յատուկ Եպիսկոպոսիդ իմոյ, յամենայն զօրութենէ հոգւոյ եւ մարմնոյ. երրորդ՝ ուխտեմ զաղքատութիւն կամաւոր, զամենայն կեանս իմ: Եւ դարձեալ խոստանամ եւ ուխտեմ եւ երդնում պահել զհաւատն սրբոյ Եկեղեցւոյն Հոռմայ»:



կանի առ պահպանութիւն կրօնին...: Բայց քանզի պիտոյ է մեզ զի պահպանութեան զարարողութիւնս եւ պահպանութիւնս մեր, թէեւ իցեմք ի լերինն. գրեցի քեզ վասն իրիս այսորիկ երկու անգամ, զի խնդրեացես յԱբբայէն, եթէ կարելի իցէ... ուխտիցեմք նմա եւ կայցեմք ի պահպանութեան կանոնին՝ զոր հաստատեալ է... զի եղբարքն որք գտանին ի մենաստանի միամիտք են. եւ մանաւանդ յորմէհետէ էջ զնաց տէրն մեր Աբրահամ յաթոռ իւր, ոչ մնաց զլուխ: Ուստի ջանացես զի կարգադրիցիմք ի նմանէ եւ միանայցեմք ընդ նմա, եւ զով ոք յիւրոց կրօնաւորաց վարդապետաց տեսցէ, արասցէ ի վերայ մեր մեծաւոր ի վասն մեր... քանզի իրաւի, ո՛վ եղբայր իմ... ոչ գիտեմք թէ յորոյ իրի վերայ եմք, միայն ուխտեմք զմեծ ուխտ վարդապետին յեկեղեցւոյ, եւ բաց յայսմանէ զայլ ինչ ոչ գիտեմք... եթէ ոչ եղիցի մեզ ճար ի կողմանէ ձերմէ, առանց կարծեաց իւրաքանչիւր ոք ի մէնջ երթայ յայլ կրօն...: Բայց մեք քահանայք, որք եմք առաջակայք, բարձանք մեր է միանալ ընդ կանոնաւ Հայոց աւագելի մերոյ... եթէ Մխիթար Աբբայն դիցէ զձեռն իւր ի վերայ մեր... լինիմք ընդ հնազանդութեան նորա, եւ ինքն լիցի ընդհանրական Մեծաւոր մեր»<sup>4</sup>:

Աբրահամ Արծիւեան, բացի Մխիթար Աբբայօր գրելէ, 20 Յուլիս 1741ին պէտք է գրած ըլլայ այս նիւթին մասին Մխիթարեան միաբաններէն նաեւ ուրիշի մը, որպէսզի անիկա բարեխօս ըլլայ Մխիթարի եւ գործը յաջողի անպայման: Արծիւեանի յիշեալ նամակին պատճէնը չէ պահուած մեր մօտ, այլ միայն պատասխանին սեւագիր օրինակը, անթուական ու անտորագիր, ուղղուած առ «Գերարդոյ եւ գերապայծառ եւ վեհալուստեր Տեառն Տեառն Պետրոսի Կաթողիկոսի». նամակագիրը կը ծանուցանէ թէ «զհայրցուածն տէրութեանդ, զոր վասն կրօնաւորաց ձերոց ի Լիբանան եղելոց գրեալ էիք, առաջադրեցի Մխիթարայ Աբբայ Հօրն եւ միջնորդեցի որչափ յիմ կողմանէ կարացի»:

Ի՞նչ եղած է Մխիթար Աբբայօր դիրքը այս հարցին դիմաց:

Մխիթար անձամբ պատասխանած է 9 Փետր. 1742ին, թէ՛ Աբրահամ Արծիւեանի եւ թէ՛ Յակոբ Եպս.ի նամակներուն, ու ղրկած

4. Հ. Նիկողոս իր այս գրած նամակին պատասխան չէ ընդունած: Նամակը գրելէն տարի մը ետք, այն է 1742ի Օգոստոսին, երբ Արծիւեանի հետ կը մտնէ Հռոմ, Յովհաննէս Պատկերահանին կը յայտնէ կացութիւնը, եւ աս ալ, իր կարգին, կը գրէ Մխիթար Աբբայօր. «Յայտ առնեմ գերապայծառութեան ձերում այդ վերոյ ասացեալ Նիկողայոս Վրդ.ն, Եղբայր Պօղոսին ասկական, սա ինձ ասաց թէ իւրեանց Լիբանանու վանքի հասարակութիւնն մին գիր գրած են հրամանուցդ, խնդրելով թէ կանօնքի եւ կառաւարդութեան ներքոյ ընդունիս զնոսա: Նոյն գրին Պետրոս Պատրիարքն ձեռք է դրած, զի հանդերձ իւր (յ)օժարութեամբ է. յայժմ տասն ամիս կայ որ նոյն գիրն յղած են հրամանուցդ (18 Օգոստ. 1742):»

է Հալէպ: Ունինք զորդ նամակներուն սեւագիր օրինակները. երկու նամակներն ալ ունին գրեթէ նոյն պարունակութիւնը. սակայն Արծիւեան չի ասանաք Մխիթարի նամակը Հալէպի մէջ, դէպի Հռոմ ճամբորդութեան մէջ ըլլալուն համար, այնպէս որ Մխիթար կը ստիպուի կրկնել առաջին գրածը՝ աւելի համառօտ կերպով, ու ղրկել Հռոմ:

Մխիթարի պատասխանը, շատ պատճառաբանեալ ու ազնիւ ուճով շարադրուած, դրական չէ. իր միտքը կը բացատրէ լայն ու ընդարձակ. կը գրէ մեծ խոնարհութեամբ, լի յարգանքով, սակայն մերժելով ձեռն առաջարկը: Մխիթարի ըրած պատճառաբանութիւնը կրնանք ամփոփել հետեւեալ երկու կէտերուն մէջ.

ա. — Ս. Ղազարի Սահմանադրութեան «համաձայն» կարող ենք ընդունիլ միայն անհատներ, դաստիարակելու եւ փորձելու համար անոնց ընդունակութիւնը՝ Միաբանական կեանքին նկատմամբ. չէ նախատեսուած ամբողջ վանքի մը միաբաններու ընդունելութիւնը միահաղոյն:

բ. — Մանուկն է միայն որ ունի ատակութիւն ստանալու տրուած դաստիարակութիւնը, թէ՛ ուսումնական եւ թէ՛ միաբանական կեանքի. բարոյապէս անհնարին է ամբողջապէս նոր կերտել երիտասարդ մը՝ որ անցուցած է կաթմութեան շրջանը ու ստացած է որոշ ուղղութիւն: Միացնելով երկու վանքերը, փոխանակ քարիքի՝ կրնայ հետեւիլ ծանր վնաս, կրնան ծագում առնել ընդհարումներ գաղափարներու եւ պարոցներու, որուն արդիւնք կրնայ ըլլալ կործանումը երկու հաստատութիւններուն միաժամանակ:

Մխիթար Աբբայ այս ամէնը մանրամասն կերպով բացատրելէ ետք՝ կ'աւելցնէ. «Բայ յերկուց պատճառացս քացատրեցելոց, որովք անկարելի է մեզ առնել զխնդրուածն ձեր, զոն աւ այլք բազումք պատճառք, որք արգելուն զմեզ ի կատարելոյ զխնդրուածս ձեր, զորս վասն երկարելոյ ոչ գրեմ»<sup>5</sup>: Արծիւեան, Հռոմի մէջ, երբ կը կարգայ Մխիթարի պատասխանը, կը դառնայ քովը գտնուող Յովհաննէս Պատկերահանին ու կ'ըսէ. «Ես նախնէ գիտէի որ Հայր Աբբան այս բանն չէր ընդուներ, բայց վասն հաճելոյ իմ կրօնաւորաց՝ ես եւս ընդ նոցա ձեռք դրի գրոյն»<sup>6</sup>:

\* \* \*

Աբրահամ Արծիւեանի կաթողիկոսական ընտրութիւնը, դէպի Հռոմ ճամբորդութիւնը, պատրիարքական Աթոռին վաւերացումը եւ

5. Մխիթար Աբբայ՝ Վենետիկէն, 9 Փետր. 1742ին, առ Աբրահամ Կթղկ. Արծիւեան՝ Հալէպ:

6. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 7 Մեպտ. 1742ին, առ Մխիթար Աբ.՝ Վենետիկ:

այլ պարագաները, 1959ին խաչիկ Վրդ. Աթանասեան ամփոփած է «Արքաեամ-Պետրոս Ա. Արծիւեան Կաթողիկոս» տիտղոսով հատորին մէջ. ընդարձակ ուսումնասիրութիւն, ուր բացի Ձմառի դիւանի տուեալներէն՝ նկատի առնուած են Հռոմի եկեղեցական դիւաններու վաւերացումներն ալ: Մենք եւս այս համառօտ յօդուածին մէջ կ'ուզենք աւելցնել մեր դիւանի տուեալները, յիշատակելով յատկապէս Հռոմ քնակող եւ Մխիթար Աբրահամ սերտ բարեկամ Յովհաննէս Պատկերահանի նամակները, որոնք հետաքրքրական են, մանաւանդ եթէ մտածելու ըլլանք որ Յովհաննէս աշխարհական ըլլալով հանդերձ՝ մօտիկ էր բարձրաստիճան եկեղեցականներու, որոնցմէ կ'իմանար մանրամասնութիւններ եւ ընդ դադոնեօք կը հաղորդէր Մխիթարի:

Արծիւեան Պատրիարք Հռոմ կը ժամանէ 11 Օգոստ. 1742ին: Յովհաննէս Պատկերահան շուրջ երկու ամիս ետք, յետ տեղեկանալու խնդրին իսկութեան, 6 Հոկտ. 1742ին մանրամասն տեղեկագիր մը կը գրէ Մխիթարի, աւելցնելով թէ այս բոլորը «տեղս ոչ ոք չի գիտեր, ես իւրեանցմէն եւ յանձնարա(րա)կան գրերէն ի ներքոյ խորհրդոյ իմացայ եւ միայն հրամանաւոր ծանուցի. մնացէ ի ներքոյ խորհրդոյ»: Յովհաննէս Պատկերահանի այս նամակը համառօտ պատմական է Արծիւեանի կեանքին, թէ Արծիւեան յատուկ ֆէրմանով սահմանուած է աքսորուիլ Երուսաղէմ, սակայն ճարտար միջոցներով յաջողած է անցնիլ Լիբանան, ուր քսան տարի մնալէ ետք, Հալէպի կաթողիկէ ժողովուրդը առանձին ֆէրման հանելով՝ զինքը հրաւիրած են Հալէպ, հանդանակութիւն ընելու համար: Արծիւեան Հալէպի մէջ երկու եպիսկոպոսներու առջնութեան թեմա՝ եպիսկոպոս ձեռնադրած է Տէր Մարգար Թուխմանեան՝ Տիարպէքիի թեմին, Տէր Յակոբ Յովսէփեան՝ Բերիոյ, եւ Տէր Սահակ Բարսեղեան՝ Գիլիսի, որոնք՝ իրենց կարգին՝ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ձեռնադրած են Աբրահամ Արծիւեանը: Երկու Փրանկիսկեան միսիոնարներու եւ կաթողիկէ իշխաններու ներկայութեամբ գումարուած ժողովի մը մէջ, եւս որոշուած է որ Արծիւեան եւ Սահակ Եպս. ուղղուին Հռոմ, առաջինը՝ Ծայրագոյն Քահանայապետէն ընդունելու Պատրիարքական պալիումը, եւ հոսակ որպէսզի նոյնին հաւանութեամբ՝ Սահակ Եպս. կարենայ չըջիլ Եւրոպա, քրիստոնեայ հաւատացեալներէն ողորմութիւն խնդրելու. հաւաքուած գումարին կէսը պիտի յատկացուէր Հալէպի թեմին, մէկ չորրորդը՝ Լիբանանի հայ վանքին, իսկ մնացածը՝ Պատրիարքին:

1742ի Յունիս ամսուն՝ Յովհաննէս Պատկերահան Հռոմի մէջ իմացած էր արդէն թէ Աբրահամ Արծիւեան, Սահակ Եպս. ի, Նիկողոս Վրդ. ի եւ տիրացու Սիմոնի ընկերակցութեամբ հասած է Մարսիլիա, ուրիկէ նամակներ գրած է Հռոմ քնակող Մարոնի բարեկամ-

ներու, յատկապէս Գրգծ. Աստեմանիի, որպէսզի իրենց համար պատրաստուի պատշաճ քնակարան. սակայն Լիվոռնոյ հասնելով՝ երբ կ'իմանան թէ Հռոմի Ս. Մարիամ Եղիպատացոյ հիւրանոցին մէջ դադրած է ներքին խռովութիւնը, յանձն կ'առնեն իջեւանիլ հոն, մանաւանդ որ նիւթական աղքատութիւնը կը ճնշէր անոնց ուսերուն վրայ<sup>7</sup>:

Հռոմ հասնելէն քանի մը օր ետք, այն է 17 Օգոստ. 1742ին, Արծիւեան պարտք կը համարի դրել Մխիթարի, իմացնելով իր Հռոմ ժամանումը: Ասիկա առաջին ինքնազիր նամակն է, որուն ստորագրած է «Ծառայ անպիտան Պետրոս Կաթողիկոս»:

Հետը բերած բազմաթիւ վկայականներով՝ Արծիւեան կը ներկայանայ բարձրաստիճան եկեղեցականներու, Ծիրանաւորներու, որոնք «սիրով ընկալան զնա ըստ Փռանկի քաղաքավարութեան»<sup>8</sup>: Յիշատակելի է յատկապէս ապանիացի Ծիրանաւոր Պելլուկայի սիրալիր ընդունելութիւնը, որ «մեծաւ յարգութեամբ սեղան կոչեց իւր պալատն զնա»<sup>9</sup>. մինչ՝ ասոր հակառակ՝ Ծիրանաւոր Կարաֆֆա «երես չի տվաւ, ասելով. Ոչ է պիտոյ մեզ դորա Պատրիարքութիւնն, առաւել վնաս է, ոչ թէ օգուտ հայոց ուղղափառաց, Դոդ դառնայ իւր եկած տեղն»<sup>10</sup>: Ծիրանաւոր Կարաֆֆայի խոնարհ այս դիրքը անկարելի չէ որ աղղեցութիւնն ըլլայ Պոլսոյ լատին Պատրիարքական փոխանորդ՝ Հերոնիմոս Արքեպս. Պոնայի, որ հակառակ էր հայ կաթողիկէ առանձին Պատրիարքութեան մը գոյութեան, եւ ճիշտ նոյն օրերուն կը գտնուէր Հռոմ, այս ուղղութեամբ յարուցանելով դժուարութիւններ: Պոնա, Հռոմէն անցնելով Վենետիկ, անկէ եւս կը շարունակէ դրել «Կարդինալ Փէթրա(յ)ին եւ Ժողովքին, ցոյց տալով թէ մեծ վնաս հետեւելոց է այսմ արարմանց»<sup>11</sup>. Պատկերահան կ'աւելցնէ թէ «(Պոնա) կարծեմ կամ սորա (Արծիւեանի) հակառակ է, կամ ոչ է հաճելի իւրեան որ զսա տեղս այս պատուեցին եւ փառաւորեցին»: Պոնայի գրած նամակը կը հասցնեն Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետին, պալիումի տըւելութենէն ան-

7. Արծիւեանի Հռոմ հասնելէն առաջ, քաղաքին մէջ կ'արծարծի մեծ հետաքրքրութիւն անոր ճամբորդութեան շարժառիթին մասին: Պատկերահանը չըջող լուրերը հաւաքելով՝ կը գրէ Մխիթարի. «Ոմանք Փռանկներուն ինձ ասին թէ մի եւ նոյն ժամանակ՝ ի Հռոմ՝ Հալպու երեք եպիսկոպոսք դառնին. եւ պատճառ դալստեան սս(ա)ցին, զոր ինչ կարացի տեղեկանալ, է՝ կամին Փափէն իշխանութիւնս առնուլ վասն ձեռնադրելոյ եւ առաքելոյ ընդ ամենայն ուրեք զմիսիօնարս: (6)ետոյ երբ հասանին տեղս, այլ լաւ վերահասու կու լինիմ եւ ծանուցանեմ ձեր հրամանուցն» (8 Յունիս 1742):

8. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 7 Սեպտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

9. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 6 Հոկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

10. Անդ:

11. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

միջապէս առաջ, եւ «Փափին բարկացեալ ոտնակոխ արար զդիրն նորին՝ ասելով. Որ ոք եկեսցէ առ Սուրբ Աթոռն՝ պարտ է ընդունել զնա, եւս առաւել Եկեղեցւոյ աշխատաւոր հաւատարիմ որդիքն»<sup>12</sup>:

Պոնա Արքեպս. գրեթէ չեց ամիս (Նոյեմբ. 1742 – 14 Յունիս 1743) կը մնայ Վենետիկ, վերջին 35 օրերը՝ իր եղբորորդիին հետ՝ կ'ըլլայ Մխիթարի հիւրը, Ս. Ղազարի մէջ: Հռոմէն, Արծիւեան կը գուշակէ անշուշտ որ Պոնա աննպաստ կերպով արտայայտուած ըլլայ Մխիթար Աբրահամի իր մասին: Սակայն Արծիւեան Մխիթարի ուղղած նամակին մէջ կը յայտնուի անյիշաչար, ու մեծանձնութեամբ է որ կ'արտայայտուի, գրելով 22 Յունիս 1743ին. «Պոնային գալն առ ձեզ եւ ի նախախնամութենէ յԱստուծոյ է, զի տեսցէ ըզժառանգն Աստուծոյ եւ ուսանիցի զընկերսիրութիւն, եւ մի՛ կոչեսցէ կամ հոգակեսցէ զժառանգն Աստուծոյ կողոպտիչ արծաթոյ, որք են մշակէ ճշմարիտ յայգեղ Տեառն եւ ի նմանէ կոչեցեալք, վասն որոյ եւս ուրախ եմ»:

Շուրջ տարի մը (Օգոս. 1742 – Յունիս 1743) Արծիւեան կը մնայ Հռոմ, կը վայելէ մեծ համբաւ, կը դառնէ սէր ու յարգանք ամէնքէն, յատկապէս Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետէն: Երկու Հայրապետներու առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ 1742ի Սեպտ. 5ին, եւ «Փափին քան զամմէնն առաւել սիրով ընկալաւ զնա. խնայ տվաւ թէ ամենայն խնդիրքն կատարէ, որով յոյժ մխիթարեալ դարձաւ ի տունն»<sup>13</sup>: Քանի մը օր ետք՝ Արծիւեան ծանրապէս կը հիւանդանայ. Քահանայապետը՝ Ծիր. Պելուկայի եւ Կարաֆֆայի ընկերակցութեամբ՝ կ'երթայ հիւանդին այցելութեան, սակայն չկարենալով բարձրանալ վերին յարկը՝ Ծիրանաւորները կը դրիէ, հիւանդին «խաղըն հարցանել՝ Փափին կողմանէ... Իսկոյն Փափին եւ քանի կարգինալի հէքիմներն եկան առ ի բշիշկել զնա»<sup>14</sup>: Հոկտ. 2ին, Արծիւեան հիւանդադին, Տոն Տոմենիքոյի ընկերակցութեամբ շնորհակալութեան այցելութիւնը կը կատարէ քահանայապետին, որ իմանալով Պատրիարքին չքաւորութիւնը «հրաման առաւ փարթ տան՝ քանի որ տեղս են, եւ առապայ՝ երբ որ խնդրէ»<sup>15</sup>:

26 Նոյեմբ. 1742ին, Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետ, 18 Ծիրանաւորներու ներկայութեան, «մեծաւ հանդիսիւ հաստատեաց ըզՊատրիարքութիւնն նորին ի վերայ Կիլիկիոյ. (յ)ետ ամենայն ջէրլմօնիայի Փափն եւ ամենայն քարտինալք իրկելով համբուրեցին զնա»<sup>16</sup>: Նոյն այս ժողովին է որ Ծիր. Փիթրա համառօտ տեղեկա-

12. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 22 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
13. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 7 Սեպտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
14. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 6 Հոկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
15. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 6 Հոկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
16. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

դիր մը տպել կու տայ, դուրս ցայտեցնելով նորընտիր Կաթողիկոսին արժանիքներն ու մեծութիւնը. տեղեկագիրը կը բաժնուի Ծիրանաւորներուն ու ներկաներուն, եւ «վերջապէս յայտ լիցի որ անունն տարածվեցաւ ի մէջ քաղաքիս, մինչ զի աւիզներով ուրիշ երկիր ծանուցին»<sup>17</sup>:

Տիրամօր Յղութեան տօնին, այն է 8 Դեկտ. 1742ին, Քուկրի-նալի քահանայապետական պալատին մէջ, բազմաթիւ Ծիրանաւորներու ներկայութեան, Աբրահամ-Պետրոս Արծիւեան՝ Քահանայապետին ձեռքէն կ'ընդունի Պատրիարքական պալիւմը, իսկ իբր ընծայ՝ «մին պատուական զՆաւրու(լս)Ք խաչ, մին մատանի եւ մին սրտաւորական սուղառ»<sup>18</sup>: Յաջորդաբար, երբ Պատրիարքը շնորհակալութեան այցելութիւն կու տայ Քահանայապետին, այդ առիթով Պապը անոր կը նուիրէ Մխիթար Աբրահամ հրատարակած Աստուծաշունչը, մին այն զոյգ հատորներէն՝ զոր Մխիթար նուիրած էր Քահանայապետին:

Յովհաննէս Պատկերահան, որ Արծիւեանի Հռոմ դալէն առաջ վերապահումներ ունէր անոր նկատմամբ, ու Հռոմի առաջին օրերուն ալ «հեռու կեցայ իւրմէն, կը դրէ Մխիթարի, ապագայ եւս այս է միտս»<sup>19</sup>, ժամանակով կը փոխուի, մանաւանդ երբ անմիջական կերպով յարաբերութեան մէջ կը մտնէ անոր հետ. «վասն այլըլարդեանց եւ առաքինութեանց, եւ ես յոյժ սիրեցի զնա»<sup>20</sup> կը գրէ, եւ սիրելուն ալ պատճառը կը բացատրէ՝ թէ «իրաւի, ճշմարիտն ասեմ, Հայր Գերյարգելի, որ եղակի դուրսութեան արժան մարդ է... երբ ժամանակ ունենամ՝ ծանուցանեմ հրամանուցը զհատկութիւն սորին»<sup>21</sup>: Ինչ որ կը տեսնուի՝ Յովհաննէս մոռցած է տուած խոստումը, ու երբ Արծիւեան կը մեկնի Հռոմէն, Պատկերահան կ'իմացնէ Մխիթարի՝ աւելցնելով. «Աստուած բարի ճանապարհ տացէ եւ օգնական լիցի այս վեհալուստէր Պատրիարքին, զի մեծ աշխատաւոր և արդիւնաւոր է վասն ուղղափառ հաւատին. ինքն բարի վարուք, առաքինատէր, մանաւանդ յոյժ խոնարհ»<sup>22</sup>:

Աբրահամ Արծիւեան իր բարութեամբ, մեղմ ու բարեխառն նըկարագրին համար կը սիրուի Հռոմի մէջ ամէնքէն: Մեկնելէն վերջ կը հասցնէ շնորհակալութեան նամակներ «Փափին, Սուրբ Ժողովին եւ ոմանց կարտինալաց, անուն յոյժ բարի է առաջի Մեծաւորաց», կը գրէ Յովհաննէս Պատկերահան Մխիթարի, 19 Դեկտ. 1744ին:

17. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
18. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 22 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
19. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 18 Օգոստ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
20. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
21. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 13 Ապրիլ 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:  
22. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 3 Օգոստ. 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

\* \* \*

Հռոմ պատկերացումը վերջին ամիսներուն, Արծիւեանի ընդառաջ կ'ելլեն երկու անախորժ միջադէպեր, որոնք պատճառ կ'ըլլան ընդհանրումներու՝ իր եւ այլ եկեղեցականներու միջեւ, ինչ որ կը մթադնեն այն մեծ համբաւը՝ որ տաացած էր քաղաքին մէջ:

1.- Պատրիարքական պալիումը ստանալէ ետք, Քահանայապետը պաշտօն կը յանձնէ Արծիւեանի՝ քննել Հռոմ քնակող բոլոր հայ եկեղեցականներուն վկայականները՝ տուրքելու համար անոնց ձեռնադրութեան վաւերականութիւնը: Քննութենէն երեւան կ'ելլէ որ Սուքիաս Եպս. Ղասաւէթ՝ սարկաւազութիւն եւ քահանայական ձեռնադրութիւն ստացած չէ Մայրաթիոյ Յակոբ Եպս. Քիլիսցիէն, ու ժամանակին՝ Հռոմ ճամբորդութենէ մը ետք՝ ինքզինք յայտարարած է քահանայ, ինչ որ չէր համապատասխաներ իրականութեան:

Սուքիասի ձեռնադրութեան անվաւերականութիւնը մեծ դայթակողութեան դուռ էր, մանաւանդ որ ճանչցուած էր ամէնքէն ու Ս. Պետրոսի տաճարին մէջ իբր եպիսկոպոս մասնակցած էր եկեղեցական արարողութիւններու: Այս ամէնը նկատի ունենալով՝ Հաւատոյ Տարածման Ժողովի նախագահ Ծիր. Փիթրա «հրաման արաւ իւրեան (Արծիւեանի), առ ի վերստին ձեռնադրել քահանայ եւ եպիսկոպոս՝ վերոյ յիշեալ Տէր Սուքիասն: Եւ սա դէմ եկաց հրամանի նորին, զնաց եւ ծանոց փափին դանաղան արգելումնս Սուքիաս Վրդ. կողմանէ, եւ հրաման էառ ոչ օձել զնա եպիսկոպոս: Եւ Կարտինալ Փեթրան այս բանի վերայ բարկացաւ, բայց դալիանի փուլիթէքայով, առանց արտաքուստ ցոյց տալով»<sup>23</sup>: Ու խնդիրը այնպէս կը վերջանայ՝ որ Արծիւեան ծածուկ կ'երպով թէական կը կրկնէ ձեռնադրութիւնը, առանց շնորհելու եպիսկոպոսական աստիճանը, հակառակ Սուքիասի պաղատանքին, որ սրտի ցաւէն կ'իյնայ անկողին ու քանի մը օրէն կը մահանայ:

2.- Երկրորդ դէպքը կը պատահի Արծիւեանի եւ Գրպո. Ասսեմանի միջեւ: Յովհաննէս Պատկերահանի նամակներուն նայելով՝ Արծիւեանի առաջին պաշտպանը Ասսեմանին էր, Մարոնի բարձրաստիճան եկեղեցական մը, որ կանգնած Արծիւեանի կողքին՝ կը ջանար հարթել ամէն դժուարութիւն, մինչեւ որ կը պատահի անհասկացողութիւն մը, եւ Ասսեմանի բարեկամութիւնը կը փոխուի թըշնամութեան:

1743 տարւոյն սկզբնաւորութեան՝ Լիբանանի մէջ կը վախճանի Յովսէփ-Պետրոս Խաղէն Մարոնի Պատրիարքը. յաջորդին ընտրողները կը բաժնուին երկու խումբի, եւ կ'ընտրուին երկու Պատրիարք-

23. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 3 Օգոստ. 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

ներ, որոնք պատգամաւորներ կը ղրկեն Հռոմ՝ ընդունելու համար քահանայապետական հաստատութիւն: Բենեդիկտոս ԺԴ. կ'ոչնչացնէ երկու կողմերու ընտրութիւնները, եւ իր հեղինակութեամբ՝ կ'անուանէ երրորդ մը, ազգական Գրպո. Ասսեմանի: Քահանայապետը երբ կ'ուզէ իմանալ Արծիւեանի ալ կարծիքը՝ այս նոր կարգադրութեան նկատմամբ, սա «մտածելով թէ հարկաւոր է ամենայն ոք Մեծաւորաց, մանաւանդ Փափին զճարհտն ասել, ծանուցել է թէ ընտրեալ Եպիսկոպոսն բարի եւ խոհեմ մարդ է, բայց թու(ր)քած եղբայր մը ունի, յոյժ չար եւ բազում վնաս հասուցեալ է ազգին եւ Աթոռոյն, եւ այս թուրքն առաւել մերձակայ ազգական է Ասսեմանիին»<sup>24</sup>: Ասսեմանի իմանալով Արծիւեանի տուած հաղորդումը՝ խորապէս կը վշտանայ, մանաւանդ երբ քաղաքին մէջ կը տարածուի լուրը. Պատկերահան կը գրէ՝ թէ Ասսեմանի «բորբոքեցաւ ընդդէմ Պատրիարքին» եւ «բովանդակ սէրն եւ քաղցրութիւնն՝ դառն ատելութեան» փոխուեցաւ. եւ երբ Արծիւեան Հռոմէն կ'ուղղուի Լիվոնոյ, Ասսեմանի սկիզբէն լուրը կը հասցնէ քաղաքին եկեղեցականներուն՝ թէ Արծիւեան «Փափին աջաց անկեալ իբրեւ աքսորեալ ելաւ Հռոմայու»<sup>25</sup>:

Երկու այս դէպքերն են որ Արծիւեան Պատրիարքին Հռոմէն մեկնելէն առաջ պատճառ կ'ըլլան փոխելու տրամադրութիւնները իրեն հանդէպ, «ոչ Փափին կողմէ, կը գրէ Յովհ. Պատկերահան, այլ կարտինալ Փէթրան եւ Ասսեմանն, հանդերձ այլ մատօնիք երես դարցուծին ի նմանէ»<sup>26</sup>:

\* \* \*

Հայ կաթողիկէ առանձին Պատրիարքութեան մը ծագումը նոր էջ մը կը բանար Եկեղեցւոյ պատմութեան մէջ: Մխիթար Աբրահայր Յովհաննէս Պատկերահանի նամակներուն շնորհիւ՝ օրը օրին կը հետեւէր Հռոմի անցուղարձերուն, նկատմամբ նոր Պատրիարքին, ու այնպէս կը թուի՝ որ ամբողջովին համակարծիք չէր եղածին: Վերեւ ակնարկեցինք թէ ինչպէս Հերոնիմոս Պոնա, Պոլսոյ առաքելական լատին նուիրակը այդ շրջանին կ'անցնէր Վենետիկէն, ուսկից կը գրէր Հռոմ՝ այս ուղղութեամբ. անկարելի է որ Մխիթարի հետ եւս խօսած չըլլայ այս նիւթին մասին. «բազմիցս խօսեցայ, կ'ըսէ Մխիթար, եւ տեսի զի դեղն որ վասն մերոց ուղղափառաց՝ է միայն ի ձեռն Աստուծոյ, զոր ինքն ամենակարողութեամբ իւրով կարէ կարդաւորել»: Ապա Մխիթար, նոյն այս նամակին մէջ, ուղղուած իր

24. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 3 Օգոստ. 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

25. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 31 Օգոստ. 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

26. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 3 Օգոստ. 1743ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

աշակերտներէն Հ. Յակոբի, 2 Նոյեմբ. 1742ին, կը նկարագրէ Արծիւեանի Կաթողիկոս ընտրութեան պարագաները, այն ինչ որ իմացած էր Յովհաննէս Պատկերահանէն, հաղիւ թէ քանի մը բացատրութիւն աւելցնելով իր կողմէ. «ի քաղաքն Հալէպ Արքահամ Եպս.ն, որ էր ուղղափառ, զերիս ուղղափառ քահանայս եպիսկոպոս է ձեռնադրեալ, եւ յետոյ նոքա զինքն Կաթողիկոս են ձեռնադրեալ. եւ այժմ միով եպիսկոպոսաւ եւ ալլովք երկու անձամբք եկեալ է ի Հռոմ, որպէս զԿաթողիկոս Սրբայ թեմին, առ ի առնուլ զհատաւորութիւն ի սրբազան Պապէն. եւ ունելով զամեն գործունեայ միջնորդ՝ առնու զոր հայցէ: Բայց թէ կատարածն ուր զնա, Աստուծոյ է գիտելի. տուն ոչ գոյ, եւ տանուտէր պատրաստի»:

Մխիթար Արքաւոր այս վերջին նախադասութիւնը կը մատնանշէ թէ վարանումով կը նկատէր եղածները. ու թերեւս իր մտքին մէջ տարբեր լուծումներ կ'որոնէր: Բայց Մխիթար, որպէս հլու եւ հրաշագանդ որդի Ս. Եկեղեցւոյ, կը հպատակի գերադոյն հեղինակութեան, եւ Արծիւեանի Պատրիարքութեան հաստատման լուրը առնելուն՝ կը փութայ գրել իր խնդակցութիւնը, առ «Վեհափառ եւ Գերապայծառ վեհալուստր Պետրոս Կաթողիկոս Հայոց, հաստատեալ ի Սրբոյ Գահէն», մաղթելով որ այս ընտրութեամբ՝ թող «լուսաւորութիւն լիցի ազգիս Հայկազնոյ ի փառս Տեառն»: Մխիթար կ'աղօթէ որ Աստուած զինքը յիացնէ եզական պարգեւներով եւ յարուցանելով «քեզ վարժանաւոր յաջորդս»<sup>27</sup>:

Յաջորդաբար, Մխիթար երբ լուր կ'առնէ թէ Արքահամ Կաթողիկոս Հռոմէն ճամբայ ելած է ու հասած Լիւնոնոյ, կը փութայ գրել հոն գտնուող Տէր Ստեփանոս Վրդ.ին, 26 Յուլիս 1743ին. «Լուսաբ թէ նաեւ գերապայծառ վեհալուստր Պետրոս Կաթողիկոսն եկեալ է այդր. թէպէտ գիտեմ զի դու ինքնին ըստ քարեայէր կամաց քոյ՝ մեծաւ սիրով պատուես զնա եւ մեծարես, սակայն նաեւ ես առ զովագումն սրտի իմոյ, որով կամիմ պատուել եւ մեծարել զնա, յանձնեմ քեզ զի ե'ւս առաւել մեծարիցես զնա եւ պատուեսցես, զի որ յԼնդհանրական Գլխոյն մեծարի, յամենից հաւատարմաց անդամոց նորին մեծեղապէս պարտի մեծարից»: Այս էր Մխիթարի կեցուածքը, որուն համեմատ քայլած էր միշտ, ու կը քայլէ այս պարագային ալ, հակառակ իր անձնական տեսակէտներուն:

Մեծ է փոխադարձաբար Արծիւեան Պատրիարքին ալ ունեցած համարումն ու վարկը Մխիթարի հանդէպ. այս կը մատնանշեն իր բոլոր նամակները. «Գոհութիւն տամ Աստուծոյ, կը գրէ Լիւնոնոյէն Մխիթարի, 7 Օգոստ. 1743ին, որ տուող է պարգեւաց, զի ետ մեզ

27. Մխիթար Արքայ Վենետիկէն, 29 Դեկտ. 1742ին, առ Արքահամ Կաթղ. Արծիւեան, Հռոմ:

եւ ազգիս մերոյ Եղբայրութիւնդ՝ իբր փարթամ եւ առատ վաճառական, որ ծածկես զմերկութիւն եւ զարդարես պատուական աւամբ. զի քեւ յարեաւ մեռեալ համբրութիւնն եւ հնազանդութիւնն ներաշխարհի ազգիս մերոյ, եւ ատելի աղքատութիւնն սիրելի եղեւ, համեստ ողջախոհութիւնն յաղթեաց զթշնամին, տարածեցաւ սուրբ հաւատն եւ փառաւորեցաւ անունն Յիսուսի՝ չոր(ր)որդ ուխտիւն սուրբ կրօնիդ: Այսու եւ ալլովք ուրախ եղեւ մայր ամենից սուրբ Եկեղեցին, եւ ամենից վաղջան ներ ծոցում նորին եղիցի. ամէն»:

Յովհաննէս Պատկերահանի ունեցած տպաւորութիւնն ալ տարբեր չէ՝ քան այս գրութիւնը. արդարեւ կը վկայէ թէ Պատրիարքն «յոյժ սէր ունի հրամանուցդ»<sup>28</sup>. այնպէս որ երբ Մխիթար Յովհաննէսին կը զրկէ Տրապիզոնցի մանուկ մը, որպէսզի Հռոմի մէջ տեղաւորել ջանայ Հաւատոյ Տարածման վարժարանը, Յովհաննէս կը թելադրէ Մխիթարի՝ գրել ուղղակի Արծիւեանին, մանաւանդ որ «Փափն իւրեան սէր ունի եւ պատիւ կանէ, որոյ աղաքաւ կարգինալ Փէթրան առանց կարծիք իւրեան՝ չէ ջի ասեր. թէպէտ սույն Պատրիարքն յոյժ ներհակ է քոյճի տղոց, բայց եթէ հրամանդ իւրեան գրես՝ յանձն կ'առնէ եւ կու խնդրէ»<sup>29</sup>: Արծիւեան ալ, իր կարգին, երբ Յովհաննէսին կ'իմանայ խնդիրը, ինքը իր կողմանէ սիրով ընթացք կու տայ առաջարկին, առանց սպասելու Մխիթարի պաշտօնական խնդրանքին. «Խնդրեմ զի ծանուցես Երէմիա Վրդ.ին չուսով յղեսցէ իւր եղբոր որդին... զի յետ իմոյ Ելանելոյ ոչ կարէ մտանել մանուկն ի դպրատունն, իսկ այժմ Աստուծով աներկբայ մը տանէ»<sup>30</sup>:

Նման պարագայի մը եւս, երբ Մխիթար կը գրէ Յովհաննէսին, խնդրելով որ եկեղեցական իշխանութիւններէն ձեռնադրութեան սընտրինումի հրաման մը ստանայ, «սույն Պատրիարքս իմացաւ այս տնօրինման կողմանէ, կը գրէ Յովհաննէս, 22 Դեկտ. 1742ին, ասաց ինձ. Թող մնայ այդ, մի՛ առներ, երբ ես տեղն (Վենետիկ) գամ, ունիմ իշխանութիւն տնօրինելոյ եւ օրհնելոյ»:

Հռոմի մէջ, զանազան առիթներու, Արծիւեան առիթ կ'ունենայ դրուստելու Մխիթարի անունը եւ գործը, թէ՛ Բահանայապետին եւ թէ՛ Ծիրանաւորներու ներկայութեան:

Պատրիարքութեան վերաբերեալ հանդէսները վերջանալուն, երբ Արծիւեան կը պատրաստուի մեկնիլ քաղաքէն, «Փափն հարցաւ իւրն թէ՛ ո՛ր ճանապարհաւ դառնալոց է ի յարեւելս. եւ սա պատասխա-

28. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

29. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 1 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Ար.՝ Վենետիկ:

30. Արքահամ Կթղկ. Արծիւեան՝ Հռոմէն, 22 Դեկտ. 1742ին առ Մխիթար Արքայ՝ Վենետիկ:

նեց. Թէպէտ դիմարին է ինձ Արեւիկունայու վերայով դնալ, բայց հարկաւորապէս պիտի Վէնէտիկ դնամ, վասն Աբբա(յ) Մխիթարն տեսանելու աղաճաւ. եւ նա՝ Թէ Ո՞վ է Աբբա(յ) Մխիթարն. սա կրկնեց Թէ այն է որ երկու Աստուածաշունչքն յղեց Սրբութեան ձերութ. (յ)եւ նորա հրամանադ. եւ կռօնի արդիւնքն ի վերայ յաղդին Հայոց կարճօրէն ծանոցց: Այս նկարագրութիւնը առնուած է 12 Յունուար 1743 թուականին գրուած ակնանատես Յովհաննէս Պատկերահանի նամակէն: Արծիւեան եւս, իր կարգին, կը ծանուցանէ Մխիթարի՝ Թէ քահանայապետը հաճած է հատորի մը մէջ ամփոփել վերջին 35 տարիներու կաթողիկէ հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, ներփակելով հոն Արծիւեանի անձին հայոց բոլոր վաւերացութիւնները, որոնց շարքին Քահանայապետին կողմէ տրուած Պատրիարքութեան հաստատութեան կոնդակը, գրուած զօրաբիմաստ լատիններէնով: Այս եւ ուրիշ կոնդակ մը, որոնց հայերէն թարգմանութիւնը, կ'ըսէ Արծիւեան, Հռոմի մէջ ոչ ոք կըցաւ կատարել, խօսակցութեան նիւթ կ'ըլլայ Պապին մօտ. «վասն որոյ ասացի սուրբ Փափին՝ Թէ ոչ ոք դատաւ ի Հռոմ, եւ ոչ ներ դարստան՝ որ թարգմանէ զպրէն Սրբութեան, հարկ եղեւ զի յղիցեմ ի Վէնէտիկ առ Մխիթար Աբբայն. ասէ. Ո՞վ է Մխիթար Աբբայն. եւ ծանուցի ըստ արժան(ւ)ոյն, եւ յատուկ նշանաւ Թէ զԱստուածաշունչն որ տուիր ինձ՝ նա է որ յղեաց առ Սրբութեան քում, եւ այլ բաղում դրեանա շարադրեաց եւ մեկնեաց, եւ արար ստամպայ հայ լեզուաւ ի օգուտ աղգիս մերոյ. յոյժ ուրախ եղեւ Սրբութիւնն»<sup>31</sup>:

Յունուար 6ին (1743) Հաւատոյ Տարածման տօնն ըլլալով, ճաշի կը հրաւիրուի նորընտիր Կաթողիկոսը. ներկայ են նաեւ Գրպօ. Մոնթի եւ Ասսեմանի, որոնք խօսակցութեան ատեն թերադնահատած են Մխիթարի հրատարակած Աստուածաշունչը, ըսելով Թէ սա անհամաձայն է Ոսկանեան հրատարակութեան հետ: Արծիւեան «ճարտարաբար պատասխանելով նոյն մօնսինեօր Մօնդիին եւ անդ եղելոց, ոչ միայն ոչնչացոյց զկարծիքն նոցին — կը գրէ Պատկերահան, 12 Յունուարին, առ Մխիթար — այլ եցոյց նոցա Թէ որչափ ջանիւ եւ աշխատութեամբ, ներկայութեամբ եօթն լեզուով Աստուածաշունչի սրբադրեցեալ է եւ ուղիղեալ ամենայն սըղալանաց»:

Արծիւեան Կաթողիկոսի սրտի մեծազոյն փափաքներէն մէկն էր Արեւելք վերադառնալէն առաջ, հանդիպում մը ունենալ Մխիթարի, առնելու համար անկէ տարիներու եղբայրական կարօտը: Հռոմ հասնելէն շարաթ մը ետք, ինքնադիր առաջին նամակով իսկ կը յայտնէ Թէ յաւիտենական քաղաքը տեսնելէ ետք՝ երկրորդ ուխտ

31. Աբրահամ Կթղիս. Արծիւեան՝ Հռոմէն, 8 Յունիս 1743ին, առ Մխիթար Աբբայ՝ Վենետիկ:

մըն ալ ունի սրտին մէջ, տեսնել զինքը մարմնաւոր աչքով: Ու յաջորդաբար, դրեթէ ամէն նամակի մէջ կը կրկնէ նոյն գաղափարը, կարօտի եւ գորովի զգացումներով. կը փափաքէ «բերան առ բերան խօսիլ, յայնժամ ընանի փափաք եւ իղձ սրտիս»<sup>32</sup>: Նոյնպէս Պատկերահանի գրածներուն նայելով, Արծիւեան «Ձատկէն (յ)ետոյ հասգատ միտն դրեր է Վէնէտիկ դալու եւ անտի գնալ ի յարեւելս»<sup>33</sup>, «ոչ այլ աղաճաւ, այլ միայն հրամանդ տեսնելու համար»<sup>34</sup>:

Մխիթար Աբբայ եւս ինք իր կողմէ, Յովհաննէսի ուղղած նամակներուն մէջ կը հետաքրքրուի այս հարցով, իմանալու համար ճշգրիտ թուականը Արծիւեանի ճամբորդութեան: Միւս կողմէ, սակայն, Մխիթար չի ծածկեր իր վարանումը եւ մտահոգութիւնը, յատկապէս նիւթական անձուկ տեղւոյն համար, որովհետեւ Ս. Ղազարի կրօնաւորական խուցերը չունէին յարմարութիւններ՝ արժանաւոր վայելչութեամբ հիւրասիրելու Կաթողիկոս մը, իր հետեւորդներով: Ուստի, Մխիթար իր միտքը կը պարզէ Յովհաննէսի, գրելով 10 Յունուար 1743ին. «Մանիւր սիրելի, զի Եթէ իցէ կարելի, հնարիւ իւրք տեղեկացիր ի մօնսինեօր Կաթողիկոսէն՝ Թէ մինչ զայ ի Վենետիկ, ո՞ւր կալնոց է գտեղի բնակութեան: Եթէ ասիցէ ի վանս մեր, ասա՛ Թէ հեռի է ի քաղաքէն, եւ խուղք նորա մանունը են եւ յարմար տեղի բնակութեան քոյոյ մեծութեան ոչ գոն անդ: Իսկ եթէ ասիցէ՝ ի քաղաքն բնակիմ, ասա՛ նմա Թէ մի երկու շաբաթ յառաջագոյն քան զգալնդ՝ լաւ է զի զրիցես Աբբայ հօրն, որպէսզի նա դտուն յարմար գտցէ վասն քոյ, որպէսզի ընդ գնալդ բնակեցես անդ»:

Հարցը, սակայն, ինքնաբերաբար կը լուծուի. քաղաքական աննպաստ պայմաններու հետեւանքով՝ Քահանայապետն անգամ խորհուրդ կու տայ Արծիւեանի ջմտնել վենետիկեան սահմանները, այլ Լիւիդուոյէն անցնելով՝ շարունակել ճամբան դէպի Արեւելք:

Լիւիդուոյ հասնելով, Արծիւեան Կաթողիկոս կը գրէ Մխիթար Աբբահօր, խորհուրդ հարցնելու համար՝ Թէ ո՞ւր կրնար ուղղուիլ՝ հաստատելու համար Սթոլը, քանի որ ինք կը տատամսէր ընդ մէջ Մարսիլիոյ, Պոլսոյ եւ Լիբանանի: Օգոստոս 17ին (1743), Մխիթար երկար նամակով մը կը պատասխանէ Արծիւեանի, մի առ մի թուելով վտանգներն ու նեղութիւնները՝ որոնց առջեւ պիտի դառնուէր Պոլսոյ մէջ, ըլլա՛յ հայ, ըլլա՛յ լատին եկեղեցականներու կողմէ. Լիբանան դառնալը օգտակար կրնար ըլլալ վանականներուն միայն.

32. Աբրահամ Կթղիս. Արծիւեան՝ Հռոմէն, 22 Դեկտ. 1742ին, առ Մխիթար Աբբայ՝ Վենետիկ:

33. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 6 Հոկտ. 1742ին, առ Մխիթար Աբ.՝ Վենետիկ:

34. Յովհ. Պատկերահան՝ Հռոմէն, 12 Յունիս. 1743ին, առ Մխիթար Աբ.՝ Վենետիկ:

Մխիթար ամենէն աւելի նպաստաւորը կը համարի դիմել Գաղղիոյ Թաղաւորին, որ կրնար նկատի առնել Քահանայապետին եւ այլ եկեղեցականներու վկայականները, ու կրնար գործածել իր Թաղաւորական հեղինակութիւնը՝ Օսմանեան պետութեան առջեւ ճանչցնել տալու համար Կիլիկիոյ կամ Սիսի նոր Պատրիարքութիւնը, որու ներքեւ կ'իյնար նաեւ Հալէպի թեմը. այս վերջին լուծումն ալ, սակայն, Մխիթարի համար արմատական չէր թուեր: Այս բոլորը գրելէ ետք՝ Մխիթար կը թողու Արծիւեանի որ իր ընտրութիւնը կատարէր, խոստանալով իր խոնարհ աղօթքի նպատար, եւ մաղթելով որ Աստուած «յաջողեացէ քեզ ո՛ւր եւ գնացես»:

Արծիւեան կ'ողողուի Աղեքսանդրիա, ուսկից նամակով մը կը նկարագրէ ճամբորդութիւնը: Տարի մը ետք՝ դարձեալ Աղեքսանդրիա կը գտնենք զինք, ուսկից կը գրէ ուրիշ նամակ մըն ալ: Այս կերպով՝ Ս. Ղազարի դիւանը կ'ունենայ ինը նամակ Արծիւեանի ստորագրութեամբ, որոնցմէ առաջինը գրած է (հաւանաբար) Լիբանանէն, 18 Յուլիս 1741ին. յաջորդ չորսը գրած են Հռոմէն՝ 1742ի Օգոստ. 17ին եւ Դեկտ. 22ին, 1743ի Սալոնիկ 21ին եւ Յունիս 22ին. Լիւփոսոյէն գրած է երկու նամակ, 1743ի Օգոստ. 7ին եւ 15ին. իսկ վերջին երկուքը՝ Աղեքսանդրիայէն, 1743ի Սեպտ. 25ին եւ 1744ի Սեպտ. 3ին:

\* \* \*

«Ոչ եմ խմատուն եւ որդի դպրատան. բաց ասեմ եւ ոչ ամաչեմ», կը խոստովանի Աբրահամ Կաթողիկոս Արծիւեան՝ իր նամակներէն մէկուն մէջ, ցոյց տալով այն համեստ կարծիքը՝ որ ունի իր անձին հանդէպ. այս է արդարեւ ճշմարիտ մեծութիւնը: Տարակոյս չկայ որ դարուն սրբակեաց եւ մեծանձն հոգիներէն մէկը եղաւ Արծիւեան, զոհուած իր հաւատքին եւ համոզումներուն, դառնալով կենդանի նահատակ մը՝ ի սէր ուղղափառութեան, որ արծարծած էր իր մէջ՝ մանկութեան օրերուն, եւ մնաց վառ միջեւ իր մահը: Զթողուց գրաւոր մեծամեծ երկեր. բաց խոստովանողի անունին հետ՝ հիմերը դրաւ երկու մեծ ձեռնարկներու, որոնցմէ առաջինն է՝ Անտոնեան Միաբանութիւնը, որուն մէկ ճիւղը կրնայ նկատուիլ Զմամուի Հայ վանքը, եւ երկրորդը՝ Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը, որ իր բարեբար նպատար քերաւ՝ Ս. Եկեղեցւոյ փոքին մէջ:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԻԱՆ

## Résumé

### NOUVEAUX MATÉRIAUX RELATIFS A ABRAHAM ARDZIVIAN PREMIER PATRIARCHE DES ARMÉNIENS CATHOLIQUES

(P. SAHAK DJEMDJEMIAN)

L'Académie Arménienne des Pères Mekhitaristes de St. Lazare à Venise a tenu, le 30 Décembre 1979, une séance spéciale en hommage à la mémoire du Patriarche ABRAHAM PIERRE I<sup>er</sup> ARDZIVIAN, dont le tricentenaire de la naissance fut commémoré cette année, dans plusieurs centres et Instituts de la communauté arménienne catholique en Proche Orient.

Durant la séance tenue à l'Académie de St. Lazare, l'Auteur de cet article a présenté les résultats d'une recherche effectuée dans les archives de St.-Lazare et concernant les rapports entre Ardzivian et Mekhitar, le fondateur des Mekhitaristes. Il y a neuf lettres signées par Ardzivian et adressées à Mekhitar: une du Liban, datée de 18 Juillet 1711; quatre de Rome, écrites entre 1742 e 1743; deux de Livourne, datées de 1743; et deux autres d'Alexandrie d'Egypte, écrites entre 1744 e 1745.

L'A. éclaire d'une nouvelle lumière plusieurs détails relatifs à la vie et à l'activité du Patriarche Ardzivian, qui était profondément lié à Mekhitar par une amitié spirituelle dès 1697, année de leur unique rencontre.

L'A. souligne surtout la période du long séjour d'Ardzivian à Rome (11 Août 1742 - Mai/Juin 1743), grâce à une dizaine de lettres, qu'un ami de Mekhitar, Jean, dit Le Peintre, avait envoyées à Venise, dans la même période, en lui communiquant des notices journalières des événements de l'ambiance ecclésiastique de Rome.

Sont particulièrement intéressantes les idées personnelles de Mekhitar sur le projet qu'Ardzivian et les moines de la Congrégation des Frères Antoniens arméniens du Liban lui avait proposé pour une totale union des deux ordres, sous l'unique direction suprême de Mekhitar; et non moins intéressantes les pensées propres de Mekhitar sur la formation d'une communauté arménienne catholique à part, ainsi que les conseils qu'il donnait pour le choix d'un lieu où installer le nouveau Siège Patriarcal.